Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական ծրագրերը, հատկապես երկարաժամկետ ծրագիրը, ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է վերանայել, քանզի շատ արագ է զարգանում գիտությունը, տեխնիկան, փոխվում են աշխատաշուկայի պահանջները, ներքին և արտաքին շահակիցների կարիքները, կառավարման, վարչական, ուսումնական գործընթացի կազմակերպման մոտեցումները: Ներդրվում են կրթական նոր ծրագրեր, ուսուցման նոր ձևեր ու տեխնոլոգիաներ, հետևապես ռազմավարական ծրագիրը պետք է համահունչ լինի ժամանակի պահանջներին, առավել, երբ քոլեջն իր գործունեությունն իրականացնում է համակարգված և նպատակաուղղված իր առաքելությանն ու նպատակների իրականցմանը:

Վերանայումը կարող է լինել քոլեջի գործունեության ներքոլեջային վերահսկողության, ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման արդյունքների և վերաբերի քոլեջի գործունեության որևէ ուղղությանը:

Ռազմանվարական ծրագրի իրականցման ընթացքում ծագած խնդիրները, հարցերը, նպաստող և խոչընդոտող պայմանները պետք է դարձնել քոլեջում գործող համապատասխան խորհրդի կամ հանձնաժողովի նիստի օրակարգային հարց:

Վերհանված խնդիրները, հարցերը քննարկվում են, տրվում են գնահատականներ, կայացվում համապատասխան որոշումներ:

Պատասանատու մարմինը՝ հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը, կայցրած որոշման համաձայն, ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ, ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ, ինչպես նաև կատարողականի և խրախուսման վերաբերյալ:

Վերանայումը և գնահատումը պետք է արտացոլվեն տնօրենների խորհրդի արձանագրություններում: